№ 40. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9.

1875

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9. № 40.

МОСКВА ОКТ 1875 УТРО

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 բուբլ, կէս տարվանը 3 բուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Գատուրեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ, Редакція „Мшакъ.“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 9—12 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից մի կոպէկ։

ԹԻՖԼԻՍԻ ԱԶՆՈՒԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԻՑ

Անցեալ օրը, Ս. Պետերբուրգի Ռօքսայում Թիֆլիսի կալուածական Բանկի գրաւական թերթերը ծախվել են հետևեալ գներով՝

18 տարի 7 ամիս ժամանակով 95 բուբլ գրաւաթերթերի 100 բուբլին,

Մնացածները, աւելի երկար ժամանակով, 94 բուբլ։ 1 (2)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ ցանեցիք այն էլ հնձում էք։—Ներքին տեսութիւն։ Ջուր և գազ։ Նամակ Ներքին-Ագուլիսից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Սովը Փոքր-Ասիայում։ Թիւրքիա։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ԻՆՉ ՑԱՆԵՑԻՔ ԱՅՆ ԷԼ ՀՆՁՈՒՄ ԷՔ

—

I

„Մշակի“ ներկայ համարի արտաքին տեսութեան մէջ տպում ենք մի յօդված Փոքր Ասիայի սովի վրա։ Թշուառութիւնը մեծ է,—իսկ մենք չենք էլ մտածում որ և է օգնութիւն հասցնել նոցա, որոնց ոչ թէ միայն պէտք է օգնէինք, որպէս Թշուառութեան մէջ ընկած մեր հայրենակիցներին, բայց գոնէ այդ ողորմելիների վրա նայէինք ընդհանուր մարդասիրական կէտից....

II

Օգնութեան տեղը պատահումներ կատարեալ անտարբերութիւն.... Այո՛, մեր թշուառ հասարակութեան մէջ նշոյլ չը կայ մարդկային, մարդասիրական զգացմունքի....

III

Մեր դերասանական խումբը, որ բաղկացած է այնպիսի անդամներից, որք իրանք էլ հարուստ չեն, մեզ օրինակ է ցոյց տալիս, յայտնում է որ կամենում է մի հայերէն ներկայացումն տալ յօգուտ Փոքր-Ասիայի սովալուկների,—իսկ հասարակութիւնը, փոխանակ նրանց օգնելու, նրանց հրաւէրքից օգուտ քաղելու,—անտարբեր է մնում....

IV

Եւ յետոյ ինքն հասարակութիւնը զարմանում է, ինքն էլ բարձրաձայն ազաղակում է՝ ամօթ մեզ.... Ի՞նչ զարմանալու բան կայ... Այդ անմխիթար երևոյթն արդեօք հետևանք չէ՞ մեր կեանքի, մեր պատմական պատճառների....

V

Դարերով ճնշված լինելով մահմեդականների անազորմ, կատաղի բռնաւորութեան տակ (որ չը խօսենք մեր հին պատմական թշուառութիւնների վրա), հայոց ազգը ոչ թէ միայն կորցրել է ինքնաճանաչութիւնը իրան կազմող բոլոր անդամների բարոյական կապերի մասին, բայց հայը կորցրել է և մարդկային նուրբ, մարդասիրական ընդհանուր զգացմունքներից շատերը։ Մահմեդական լուծի ազդեցութիւնը անցել է և մեր հասարակական և ընտանեկան կեանքի մէջ։

VI

Ինքն հասարակութիւնը, մանաւանդ հին սերունդը, դարերով ճնշել, հալածել է ամեն նոր գաղափար, ամեն բարձր, ազնիւ ձգտումն, աշխատել է արմատից հանել նոր սերունդի միջից հաղիւ երևող ընդհանուր մարդասիրական, հասարակական ձգտումներ, ամեն ջանք է գործ դրել սահմանափակել ուղղը և միաքը։ մարդի միակ պարտաւորութիւնը համարել է կօպէկի վրա կօպէկը աւելացնել, ոտնակոխ է արել իւրաքանչիւր ազնիւ, մարդկային նպատակ, ցնորք է համարել ազգի դաստիարակութիւնը, ժողովրդի լուսաւորութիւնը, երևակայական է համարել ամբոխի մէջ մարերի ցանելը, ամեն բան ճնշել, հալածել է, ինքն իրան հասցրել է կատարեալ կրաւորականութեանը, ինքն իրան բթացրել է,—և յետոյ զարմանում է որ այլ ևս ոչ մի արդար, ընդհանուր մարդասիրական միաք տեղ չունի նրա մէջ, ոչ մի ազնիւ միաք արձագանք չէ գտնում....

VII

Ինչ որ ցանել էք, այն էլ հնձեցէք։ Հասցրել էք ինքներդ ձեր անողորմ բռնաւորութեամբ ձեր հասարակութիւնը կրաւորականութեան և բթամտութեան անելևակայելի կէտին,—այժմ հնձեցէք ձեր ցանածը....

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋՈՒՐ ԵՒ ԳԱԶ

—

Թիֆլիսի քաղաքային Դումայի մէջ յայտնվեցաւ վերջին նստերում Ջրանցքի և գազի լուսաւորութեան հարցը։ Ձայնաւորներից մի քանիսը կամենում էին միացնել այդ երկու խնդիրները, բայց Դուման վճռեց ձայների բազմութեամբ միմեանցից բաժանել այդ երկու խնդիրները, յետ գցել գազի հարցի քննութիւնը անորոշ ժամանակով, իսկ այժմ սկսել քննել Ջրանցքի խնդիրը։ Ու ճշմարիտ է որ այդ ձեռնարկութիւնները հաղիւ թէ կարող են զուգընթաց կերպով իրագործվել։ Տեխնիկական կողմից սխալ է այն կարծիքը որ գազի և ջրի խողովակները կարելի է միասին դնել մի և նոյն առուի մէջ, որովհետև այժմ ապացուցված է որ գազի և ջրի խողովակները միմեանցից մօտիկ լինելով, ջուրը փչանում է վարակվելով գազից։ Ընդհակառակն պէտք է աշխատել որքան կարելի է միմեանցից հեռու դարսել ջրի և գազի անցքերը։ Ուրիշ կողմից իրանց անտեսական բնաւորութեամբ և եթէ կարելի է ասել իրանց բարոյական նշանակութեան կողմից այդ երկու ձեռնարկութիւնները բոլորովին տարբեր են։

Ջուրը առաջին հարկաւորութեան մի պիտոյք է. մաքուր և առողջ ջուրը նոյքան հարկաւոր է մարդու համար, որքան մաքուր և առողջ օդը։ Գազը, ընդհակառակն, շռայլութիւն է, մանաւանդ մեր Թիֆլիսի պէս քաղաքում, որտեղ օրը շատ ուշ է մթնանում, ուրիշ գազի լապտերը կը վառվի շատ շատ օրը երկու ժամ։ Գազի սպառողները ամեն մեծ քաղաքներում լինում են խանութներ, կաֆէներ, գործարաններ, գործատոներ և այլն, իսկ այդ տեսակ հիմնարկութիւնների թիւը շատ փոքր է մեզանում, այնպէս որ հաղիւ թէ որ և իցէ շահ կը ստանայ մի բաժանորդական ընկերութիւն որ յանձն կառնի գազ պատրաստելու և նորանով քաղաքը լուսաւորելու։ Խանութները մեզանում շատ վաղ են փակվում։

Ջուրը, ընդհակառակն, առաջին հարկաւորութեան պիտոյքը լինելով, մեծ շահ սպասել նրանից անկարելի է։ Մի քաղաքի մէջ ջրանցք անցկացնել շահասիրական նպատակներով, մենք համարձակվում ենք ասել, յանցանք կը լինէր։

Այդ պատճառով այն ձեռնարկութիւնները, որք միայն անտեսական և, եթէ կարելի է ասել, բարոյական օգուտներ են ներկայացնում հասարակութեանը և որոնցից չէ կարելի, կամ չը պէտք է ոչինչ շահ սպասել (կամ եթէ շահ էլ կը լինի, աննշան շահ կը տան), մեծ մասամբ ընդունված է որ ինքն քաղաքը, քաղաքային հասարակութիւնը պէտք է յանձն առնի իրագործելու և ոչ թէ կոնցէսիայով տայ մի որ և իցէ բաժանորդական ընկերութեան, որ անպատճառ իր շահերը կը որոնէ այն անհրաժեշտ ձեռնարկութիւնից, որ ընդհակառակն կարողութեան չափ պէտք է աշխատել էժանացնել, աչքի առջև ունենալով քաղաքի ազգաբնակութեան մանաւանդ չքաւոր դասը։

Մենք դեռ ևս անցեալ տարիներում յայտնած ենք այդ կարծիքը „Մշակի“ մէջ, և այժմ ուրախութեամբ նկատում ենք որ մեր կարծիքին համաձայն կարծիքը ջրանցքի խնդրի վրա յայտնել են իրանց վերջին համարներում և տեղական երկու ռուս լրագիրներ՝ „Тифлисскій Вѣстникъ“ և „Кавказъ“.

Վերջացնում ենք մեր յօդվածը հետևեալ խօսքերով՝ եթէ ջրանցքը ոչինչ շահն էլ չը խոստանար, այնու ամենայնիւ պէտք էր շինել նրան։ Մի՞թէ որովհետև ջուր անցկացնելը, որպէս առևտրական ձեռնարկութիւն, չէ տալիս ոչինչ շահերը, կամ շատ քիչ շահ է խոստանում, ուրեմն ջրանցքը բոլորովին չը պէտք է շինել...

Մենք մինչև անդամ համարձակվում ենք ասել, որ եթէ քաղաքը նիւթական ինչաս կրէ անդամ մաքուր և առողջ ջուր բնակիչներին տալուց, նա այնու ամենայնիւ մի րօպէ չը պէտք է տարակուսէ ջրանցք շինելու, որովհետև անտեսական, բարոյական և առողջապահական օգուտները մեծ քաղաքի մէջ մաքուր և առողջ ջուր ունենալուց այնքան մեծ են, որ նոցա հետ համեմատելով ամենամեծ նիւթական զոհաբերութիւններն անդամ չնչին պէտք է համարվեն։

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

—

Երբ բարոյական հիւանդութիւնն օր ըստ օրէ սատականում է որ և իցէ հասարակութեան մէջ և նորա բոլոր դասակարգերում տարածում է ասնորա բոլոր դասակարգերում տարածում է ասնորա բոլոր դասակարգերում տարածում է ասն

լով, որքան կարելի է, ապարդիւն երևացնել նոցա գործունէութեան չը ջանը։ Բայց թէ հոգաբարձուք միշտ աշխատել են ուսումնարանի գործի համար, դորան ապացոյց կարող են լինել նոր հինգ քարէ երկյարկի կրպակները, որք, չինուելով հին դպրոցի հարաւային կողմում, այսօր տարեկան ութ հարիւր ռուբլի մուտք են բերում։ Ապացոյց են նոյնպէս Փիրոյեանից ընծայած չինութեան տակ ծայրէ ի ծայր կամարով կապած նկուղ չինելը և նորա արևմտեան կողմի միայարկ քարուկրեայ կրպակները նոյն իսկ կապալառուների հաշուով, որպիսի չինութիւնը, որի վրա ծախս կը լինէր մինչ եօթը հազար ռուբլի, աւելացուց առաջվայ կապալադրամը առաջի հինգ տարի երկու հարիւր ռուբլով տարէնը, իսկ վեցերորդ տարին հազար ռուբլով։ Վերջապէս չեն մնացած առանց ուշադրութեան և ուսումնարանի ներքին գործերը, որք երբեմն չեն յաջողվում նենգութեամբ լարած ձայների բազմութեամբ...

Միթէ այս բոլորը վկայ չէ կարող լինել ներկայ հոգաբարձուց գործունէութեանը։ Այո՛ միայն պ. Սիմոնեանցը կարող է ուրանալ այդ բոլորը, հաւատացնելով իւր նմաններին միայն իր վայր ի վերոյ քարոզներով. և միթէ նա կարծում է, որ Նորին Վեհափառութիւնը, հաւատ ընծայելով սրա ասածներին, կը կատարէ համաձայն դորա հաճոյքին։

Դառնանք այժմ դէպի կապալառութիւնը։

Բացի իմ հիւանդութեան ժամանակից—այս տարվայ յունվարից մինչի ամարանոցից դառնալս, այն է օգոստոսի 27-ին—ես չարունակաբար ներկայ եմ եղել հոգաբարձական նիստերին, իսկ հիւանդութեանս ժամանակը, որովհետև ես մերձ էի մահին, երբէք ես հրաւիրված էլ չեմ եղել։ Ուրեմն ստում է «Մեղուն» ասածը, թէ հոգաբարձուք, որոնք Շահբուդաղեանցի կողմն են խօսել, բնաւ դպրոցի մէջ ոչք չեն կոխել, չը նայելով որ բազմիցս հրաւիրված են եղել ժողովը։

Պ. Իսահակ Շահբուդաղեանցը իրաւ եկաւ ինձ մօտ Մանգլիզ խնդրելու, որ ես երաշխաւոր լինեմ նրա մասին անդեան և լուսաւորութեան կապալառութեան համար, որովհետև զրաւական չունի։ Ես մերժեցի նրա խնդիրը պատասխանելով, որ իմ երաշխաւորութիւնը անտեղի կը լինի, երբ հոգաբարձութիւնը որոշել է զրաւական պահանջել։ Մերժեցի նոյնպէս, որ անկարելի էր ինձ ներկայ գտնվել կրկնաճրագախօսութեան օրը օգոստոսի 27-ին առաւօտեան, թէև նորա ասելով կապալը պիտի թողնէին Առաքել քահանայ Սուքիասեանին։ Ես եկայ օգոստոսի 27-ին երեկոյեան ինն ժամին—ուրեմն որտեղ է երևում իմ կողմնապահութիւնը, երբ առաւօտը կրկնաճրագախօսութեան ժամանակ բոլորովին կանոնաւոր կերպիւ կարող էր մի այլ անձն վեր առնել կապալը։

Օգոստոսի 28-ին առաւօտեան գնացի ուսումնարան, ուր հանդիպեցայ հոգաբարձու պ. Պապովին, որը տուեց ինձ Շահբուդաղեանցից նոյն իսկ օրը տուած թուղթը, խնդրելով որ ներկայ լինեմ նիստին լուծելու այդ խնդիրքը, որի մէջ նա—Շահբուդաղեանցը—ասել էր, առաջ իրան խօսացրին, թէև հակառակ էր այս բանին, յետոյ սորան դուրս ուղարկելով ընդունեցին հայր Սուքիասեանին, որին առանց մրցութեան յանձնեցին կապալը աշակերտազուրխ 26 կօպ. այն ինչ ինքն Շահբուդաղեանցը 30 կօպ. պահանջելով, խնդրել էր մի և նոյն ժամանակ որ եթէ միւսը պակաս կը պահանջի, թող երես առ երես մրցութիւն նշանակեն, որովհետև այդ ժամանակ նա իրա հակառակորդ չէր գտնում այնտեղ, որից հարկադրված պակասցնէր գինը։ Այսպիսի դէպքումը կանոնիցիայի կարգալը կամ չը կարդալը, թէև կարդաց ինձ քարտուղար Ջալալեանը, ինչ նշանակութիւն ունէ գործի համար, երբ որ հարցը անկանոնութեան վրա է։

Ես համաձայնեցայ ներկայ լինել նիստին միայն պ. Պապովի առանձին խնդրանքը, որովհետև այն օրը ես բոլորովին կամք չունէի մտնել պաշտօնիս մէջ։ Ուրեմն որտեղ է երևում իմ աշխատութիւնը և կամ թէ կողմնապահութիւնը Շահբուդաղեանցի մասին։

Վերոյիշեալ նիստում թուղթը կարդալուց յետոյ նախագահի պաշտօնակատար հայր աւագ քահանայ Արարատեանցը յայտնեց, որ Շահբուդաղեանցի բոլոր գրածները ուղիղ են։ Նա, ճըշմարիտ, խնդրից մրցումն նշանակել, եթէ պակաս վերցնող լինի և որ նիստը դադարեց միայն այն պատճառով, որ հոգաբարձու քահանայ Ղեւոնդ Խարազեանցը վրդովմունք յարուցեց, երբ հայր Արարատեանցը յայտնեց, թէ ցանկալի կը լինէր, եթէ ոչ ոք մերերից խառն չէր եղել Տէր Առաքելի հետ այս կապալում... բայց թէ ինչպէս առանց իրան ստորագրութեան, աւելացրուց հայր փոխ-նախագահը, մնացեալ հոգաբարձուք վաւերական են համարում, այդ մասին կազմած օրագիրը, նա չէ հասկանում։ Ուրեմն որտեղ է եղել բանաւոր մրցումը, որ «Մեղուն» գրում է, աշխատելով իրողութիւնը յեղաշրջել, մեղաւորին ճշմարտացնելու և արդարին մեղաւոր հանելու և միթէ իսկ այս անվայելուչ իրողութիւնը չէր, որ կազմվեցաւ նոր նիստը։ Թէ որքան ճշմարիտ էր Տէր հօր ասածը և ինչու այնքան հոգաբարձուներից միայն Տէր Ղեւոնդ Խարազեանցը վրդովվեց, այդ իսկ Տէր Ղեւոնդին հասկանալի է։ Ես պահանջեցի հրաւիրել և միւս անդամներին, ոչ թէ ասելով, որ նրանք կը դան այս անգամ, ինչպէս գրել է «Մեղուն», այլ պընդելով, որ այն առաւօտեան նիստը չէր սովորական հինգշաբթվայ երեկոյեան նիստը, որ հարկաւոր չէր եղել հրաւիրել նրանց և որ այս մի և նոյն է թէ զրկել նրանց իրանց ձայներից, իսկ եթէ չեն գայ, այն ժամանակ մենք անպարտ կը լինենք։

Հրաւէրը գրեց ինքն փոխ-նախագահը համաձայնութեամբ ներկայ եղող անդամների, բացի Տէր Ղեւոնդից և Պապովից։ Հոգաբարձութեան անդամները, յարդելով Տէր հօր հրաւէրը, ներկայացան խորհրդարան։ Սոքա էին պ. պ. Սունդուկեանցը, Արծրունին, Ղորղանեանցը և Մուշեղ քահանայ Տէր-Ղեւոնդեանցը։ Ներկայացան և առաջինքը։

Ժողովի սկզբում պ. Պապովը նախապէս պահանջց հեռացնել Տէր Մուշեղին, առաջ բերելով, որ նա կոնսիստորիայի հրամանագրով և նրա առիթով կազմած օրագրով հեռացրած է խորհրդակցութեան իրաւունքից, սակայն իսկ այն հոգաբարձուց ստորագրութեամբ, որոնք կապալը կամենում էին տալ Տէր Առաքելին. միւսները աղաղակեցին նորա դէմ, ապացուցանելով, որ կոնսիստորիայն ոչ միայն չէր կարող հեռացնել հոգաբարձուին իւր պաշտօնից, թէև լինէր ժամանակաւէս և կամ թէ պահանջմամբ Առաջնորդի, այլ և անդամ խառնվել դպրոցական հարցի մէջ չունէր իրաւունք, քանի որ կանոնագրութեան 1, 2 և 3 յօդուածների զօրութեամբ դպրոցն կախումն ունի ընդհանուր Կաթողիկոսի՝ անմիջական իրաւասութենից, և չէ որ իսկ այսպիսի և սրանման անտեղի կարգադրութիւններն էին պատճառը, որ ժողովուրդը մնակեց իրան համար վերոյիշեալ կանոնագրութիւնը, որ այժմ ոտնակոխ է լինում ազգի առաջը և որի դէմ ես ինձ դաւաճան կը համարեի, թէ հակառակ ինչ գործէի։ Այո՛, ինքն Կաթողիկոսն է հոգաբարձուներին հեռացնողը, որովհետև և նա է հաստատող ժողովրդի ընտրութեան։ Թէ ճշմարիտ այսպէս է, կարող է վկայել, ասացին շատերը, և այն փաստը, որ կայ արդէն Նորին Վեհափառութեան հաճութեամբ կոնսիստորիայի վրա Սինոդի հրաման, որի մէջ այսպիսի մի իրողութիւն համարված է անկանոն և կոնսիստորիայի իրաւանց արտաքոյ և վանորոյ պատուիրած է հրաման ստանալու օրից համարել Տէր Մուշեղին հոգաբարձութեան անդամ, բայց թէ ինչու հրամանը մինչ ցայսօր չէ կատարվում, այս մեզ զարմացնում է—և միթէ Տէր Մուշեղը, ինչպէս և ամէն մէկս մեզանից, ասացին ոմանք, որովհետև ողջվս էլ հաւասար անդամք ենք, պէտք է ենթարկվենք այսպիսի անպատութեան և անտեղի կարգադրութեան, երբ նոյն իսկ կայսերական կանոնը արդէն թոյլ է տալիս հերքել անիրաւացի պահանջը (29 ст. Суд. Уст. о нак. налаг. Мир. Судьями и рѣшеніе гражд. кас. деп. 1871 года № 245)։ Տէր Մուշեղը, տեսնելով որ հոգաբարձութիւնը հեռագրում է այս մասին կաթողիկոսին և որ պ. Պապովի կողմանէ յարուցած վէճը անբաւականութիւն է ծագեցնում, թողեց նիստը, պատճառ բերելով իրա գործերը։ Ուրեմն նա դուրս եկաւ իրա ազատ կամքով և ոչ թէ բազմութեան ձայնի պահանջողութեամբ։

Տէր Մուշեղի հեռանալուց յետոյ, ինչպէս և անցեալ տարի հերքեցի ես Տէր Առաքելի կապալառութիւնը տէրութեան օրէնքի կանոնների զօրութեամբ XI հատորի առևտրական մասի յօդ. 13,77 և քրէական մասին 1658 յօդ. որոնցից առաջի երկուսը արգելում են մտնել քահանայից որ և իցէ առևտրական գործի մէջ, թէև լինէր մասնաւորապէս, իսկ երկրորդը մինչև անդամ ենթարկում է 10—300 ռուբլի տուգանքի։ Այս կանոնները կարդացվեցան նիստումը։

Աչքի առաջ ունելով այսպիսի դիպուածներում կապալառութեան անվաւերականութիւնը, թէև առաջարկէր սա պակաս գին, և նրա անպատասխան լինելը օրէնքի առաջ, երբ նրա մի որ և է պակասութեան մասին այդ դիպուածում կը կամենար հոգաբարձութիւնը դատ բանալ նրա դէմ, և որ նա, եթէ անդամ չէ հոգաբարձութեան, չունէ իրաւունք վեր առնել այս գործը, լուծմամբ ես հոգևոր կառավարութեան, իբր մի օտար անձն, թէև լինէր վանահայր մի որ և իցէ տեղի, որպիսի հնարած հիմանց վրա պնդում էին և առաջվայ կարծեաց վրա մնացող հոգաբարձուքը, իսկ իբր անդամ, եթէ լինէր քահանայ, կարող էր անդեան և լուսաւորութեան պաշտօնը վարել միայն տնտեսական կերպիւ, ես առաջարկեցի բաց ասել Տէր Առաքելին։ Հոգաբարձու պ. Աքիմեանցը և տեսչի պաշտօնակատար հայր Յարութիւն քահանայ Սուզանաճեանը յետ առան իրանց առաջվայ ստորագրութիւնը—նամանաւանդ որ հայր Սուքիասեանի հետ ոչ մի կապակցութիւն չէր զրած։ Ուրեմն մնացին իրանց խօսքին միայն պ. Պապովը և Ղեւոնդ քահանայ Խարազեանցը, որ ամբողջ տարին գործակատար էր Տէր Առաքելի կապալառութեան, ինչպէս վերջին անդամ չը ծածկեց, յայտնելով, որ նա երկու օրից յետոյ դադարեցնելու է թէ աշակերտների մնունդը և թէ դպրոցի լուսաւորութիւնը։ Ուրեմն ընկերութեամբ էր խառը գործի մէջ և ոչ թէ գործակատարութեամբ, ինչպէս յայտնեց Արարատեան քահանան, թէև չեղաւ մատնացոյց, այս մի և նոյն է, որովհետև երկու դիպուածումն էլ նա իրան ներկայացնում էր կապալառուի տեղ և ուրեմն չէր կարող գտնվել և վերջին նիստումը, երբ հարցը Տէր Առաքելի վրա էր, ուր թէ նա ստորագրէր օրագիրը։

Վերոյիշեալ ստորագրութեան յետ առնող անձներից հայր Սուզանաճեանը և հայր Արարատեանը թէև կամեցան նոր աճրդախօսութիւն նշանակել, բայց պ. պ. Աքիմեանցը, Սունդուկեանցը, Արծրունին, Ղորղանեանցը և ես աւելորդ և ապարդիւն համարեցինք այդ պահանջը, աչքի առաջ ունենալով, որ նշանակեալ աճրդախօսութեան ժամանակ ոչ ոք չերևեցաւ բացի Շահբուդաղեանցից և քահանայից և որ Տէր Ղեւոնդը երկու օրից յետոյ, ինչպէս ասացինք վերը, դադարեցնելու է կապալը—ուստի համաձայն դպրոցի կանոնագրութեան 17 յօդ. ձայների բազմութեամբ որոշվեցաւ տալ Շահբուդաղեանցին մնունդը 25 կօպ. փոխանակ Տէր Առաքելի առաջարկած 26 կօպ., իսկ լուսաւորութիւնը և այլն, նոյն իսկ գնով, ինչպէս յայտնել է վերջինը, այն է հինգ հարիւր ռուբլով։

Ահա ընթերցող գործի իսկ և ոչ «Մեղուի» ասած ճիշտ եղելութիւնը, որի համար կարող են վկայել ոչ թէ միայն մեզ հետ համախոհ հոգաբարձուքը, այլ և երկու քահանաները—նախագահի և տեսչի պաշտօնակատարները և որի համար ես պատասխանատու եմ, եթէ մի տառ անդամ սխալ լինի ասածիս մէջ։ Այժմս հարցնում եմ ձեզ—երևումէ՞ այս գործի մէջ որ և է կողմնապահութիւն, թէ իմ և թէ միւսների կողմից—մանաւանդ որ ես ոչ թէ միայն մերժել եմ Մանգլիզում պ. Շահբուդաղեանցի խնդիրը կրկնաճրագախօսութեան օրը ներկայ լինելու համար, այլ և նրա տուած յայտարարութեան լուծելուն մասնակցել չէի կամենում, եթէ պ. Պապովը չը հարկադրէր ինձ. իսկ որ ինչ կը պատկանի այն իրողութեանը, թէ նախագահի պաշտօնակատարը չէ ստորագրել մեր վերջին օրագրին, այնքան ստում է, որքան «Մեղուն» իր բոլոր վայր ի վերոյ գրվածներով։ Ընթերցողը թող մտաբերի միայն այն իրողութիւնը, որ գործը աւարտել են առանց մրցումի, չը նայելով պահանջման Շահբուդաղեանցի, իսկ «Մեղուն» ոչ թէ ծածկում է այս բանը, այլ և աշխատում է ստել գործը իրան նպատակին հասնելու և զրգռելու ուրիշներին հոգաբարձուց դէմ, ասելով որ իբր թէ եղել է բանաւոր մրցում։ Այժմ ասացէք, ով է այս գործի մէջ արդար և անկողմնապահ,—մենք, որոնք չենք տուել կապալը Տէր Առաքել Սուքիասեանին, թէ միւսները և նրանց հետ ինքն «Մեղուն», որ խարդախ կերպիւ պնդում է դէպի Տէր Առաքելը։

Հոգաբարձու Գր. Իզմիրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ուրախութեամբ լսում ենք, որ պ. Գաբրիէլ Սունդուկեանցը դիտաւորութիւն ունէ չուտով տպագրել սկսել իր թատրոնական պիէսաները։ Ողջունում ենք մեր տաղանդաւոր հեղինակի պիէսների տպագրութեան մէջ երևալը։ Այդ պիէսների տպագրելը կը հեշտացնէ նոցա, որք դաւառներում կամենում են հայոց թատրոն ներկայացնել և բացի սորանից նոքա կը ծառայեն որպէս հետաքրքիր ընթերցանութիւն։

***

Շաբաթ օր, հոկտեմբերի 11-ին Թիֆլիսի թատրոնում կը տրվի «Հուգենոտներ» օպերան պ. Դրօպէլլօի բենեֆիսի համար։ Պ. Դրօպէլլօ բացի սորանից կերգի «Դինորա» օպերայից մի եղանակ։ Մենք յիշեցնում ենք մեր Թիֆլիսի հասարակութեանը որ պ. Դրօպէլլօ մեր իտալական օպերայի երգիչներից ամենահին է։ Նա եկաւ Թիֆլիս իտալական օպերայի առաջին տարին, այն է 1857 թուին։—Ցոմսակները կանխիկ կարելի է գնել պ. Պետրօվսկու, կամ ինքն պ. Դրօպէլլօի մօտ։

***

Սեպտեմբերի 30-ին կատարվեցաւ Թիֆլիսի Մանկաբարձական դպրոցի բացման հանդէսը և եղաւ ուսումնարանի օրհնութիւնը։ Դասատու պ. բժշկապետ Ս. Ց. Անանով մի դասախօսութիւն կարդաց, որտեղ խօսեց հիւանդանոցների նշանակութեան վրա, խօսեց մեր երկրում ճիշդ բժշկական գիտութեան տարածման անհրաժեշտութեան վրա, և յիշեց թէ այդ հմտութիւնների տարածման ժողովրդի մէջ որքան արդելում են մեր կովկասեան ամբոխի մէջ մինչև այժմ արմատացած նախապաշարմունքները և անօրէապաշտութիւնները։ Ցոյս ունինք պ. Անանովի ճառախօսութիւնը ամբողջութեամբ տպագրելու։

***

Լսում ենք որ Թիֆլիսի հայոց հոգևոր իշխանութիւնը կամենում է հեռացնել պ. Լ. Թիւսիկեանին Ս. Մարիամեան օրիորդաց դպրոցի տեսչութիւնից, պատճառելով որ նա օտար հպատակ է։ Համարձակվում ենք ասել որ մեր հոգևոր իշխանութիւնը խառնել է հարցը։ Պետութեան օրէնքներով իրաւունք չունեն դասատուութիւն անել այն օտարահպատակները, որք ոչ ռուսաց դիպլոմ, ոչ էլ ռուսաց անցաթուղթ ունեն։ Բայց այն անձը, ինչպէս պ. Թիւսիկեանը, որ ոչ թէ միայն անցաթուղթ ունի, բայց և աւարտել է Ս. Պետերբուրգի համալսարանում, նրան բարձր ուսումնարանի դիպլոմը ոչ թէ միայն դասատուութեան իրաւունք է տալիս, բայց և պետական ծառայութեան մէջ մտնելու մի աստիճանի իրաւունքով արտօնութիւն է տալիս։ Զավը անցնել ոչ մի բանում հարկաւոր չէ, կասենք մենք մեր պատուելի հոգևորականներին։ Մենք այնպէս էլ շատ քիչ ժողովրդական վարժապետներ ունենք, կամենում ենք մեզ վերջիններիցն էլ զրկել...

***

Սեպտեմբերի 28-ից Թիֆլիսում կառավարութեան թոյլատութեամբ սկսել են ծախել փողոցներում տեղական և մայրաքաղաքների լրագիրները առանձին համարներով։ Գները նշանակված են թերթերի վրա առանձին դրօշով։ Լրագիրներ տարածողը կարող է ցանկացողներին հասցնել լրագիրները իրանց տները և կարող է ընդունել կօմիսիայով յայտարարութիւնների քաղաքում տարածելը։

***

Մեզ գրում են Աղբուլաղից (Բելի-Կլիչ) որ վաղուց է արդէն որ Աղբուլաղարնակ մօտ 40 տուն հայերի մէջ նոր եկեղեցի և ուսումնարան հիմնելու դիտաւորութիւն կայ, սակայն այդ դիտաւորութիւնը մինչև այժմ ոչինչ գործնական հետևանքների չէ բերում։ Սորանից երկու տարի առաջ հազիւ քանի մի պատուաւոր անձինք ինքնակոչ կերպով ընտրվելով, ստորագրութիւն բացեցին եկեղեցի և ուսումնարան չինելու միտքն իրագործելու նպատակով, և ինչպէս ասում են, կարճ միջոցից յետոյ մօտ 2000 ռուբլ նուիրատուութիւններից փող հաւաքվեցաւ։ Այսքան գումար պատրաստ ունելուց յետոյ, նրանք 400 ռուբլով գնեցին մի կիսաչէն, գրեթէ աւերակ տուն, որի միայն չորս պատերն էին կայացրած, եկեղեցի չինելու դիտաւորութեամբ. իսկ ուսումնարանը բոլորովին մոռանցան... Եկեղեցին էլ չիրագործվեցաւ, ուր գնացին փողերը... Մի հնաչէն և մատուռաձև փոքրիկ եկեղեցի կայ Արեշանց գիւղում որ կից է Աղբուլաղին, բայց ժողովուրդը նրան չէ յաճախում, ասելով թէ հեռու է...

***

Հոկտեմբերի 1-ին, շաբաթ օր, Թիֆլիսի երաժշտական ընկերութեան դահլիճում իտալացի պիանիստ պ. Հօլստայն տուեց իր կոնցերտը։ Ժողովուրդ շատ կարի և պարոն Հօլստայնի ամեն մի երաժշտական կտոր ածելը ընդունված էր ծափահարութիւններով։ Պ. Հօլստայնը մատների շատ զարգացած մեքանիզմ ունի, ունի և շատ գուրեկան տուչէ (զարկ) բայց պէտք է խօստովանած որ որպէս իտալացի նա աւելի լաւ է ըմբռնում և կատարում իտալական երաժշտութիւնը, քան թէ գերմանականը։ Բեթօվենի սոնատը, Լիստից փոխարկված Վագնէրի «Թանհեաուզէրը» և Շոպէնի գրվածները այնքան աջող չէ կատարել պ. Հօլստայնը, որքան Թալբերգից փոխարկված «Լուսնահար հարս» օպերայի „Fantaisie“ և մանաւանդ իր սեփական հեղինակութիւնները։ Տիկին Սալացկիին, որ մասնակցեց կոնցերտին, հասարակութիւնը կրկնել տուեց նրա երգած ռուսաց երգերից մէնը։

***

Հոկտեմբերի 2-ին Թիֆլիսի քաղաքային Դումայի ձայնաւորների ընդհանուր ժողովին ներկայացվեցաւ այն յանձնաժողովի զեկուցումն, որ նշանակված էր Դումայից քննել քաղաքիս եկամուտքը։ Զեկուցումից երևում է որ քաղաքի բիւդժէի մէջ կայ բաւական մեծ դեֆիցիտ։

***

Լսում ենք որ մօտերումս վերադարձել է Ս. Էջմիածնից Թիֆլիս Ս. Սինոդի փաստաբան, պ. Քալանթարեանը։ Ինչպէս լսել էինք սա չորս տարի ժամանակով պարտաւորված էր Սինոդի հետ առանձին պայմանով կապված, կարգադրել Սինոդի բոլոր խառն գործերը և պաշտպանել արքունական դատարաններում Էջմիածնի վանքի օգուտները, վանքին պատկանեալ գիւղերի և հողերի իրաւունքները։ . . . Հետաքրքիր կը լինէր իմանալ թէ ինչ պատճառով պ. Քալանթարեանը չորս տարվայ փոխանակ հինգ ամիս միայն դիմանալով Ս. Էջմիածնի մէջ, թողել է վանքը և

յետ է եկել Թիֆլիս։ Ցոյս ունենք, որ պ. Բալանթարեանը իրան ճշմարտացնելու համար հասարակական կարծիքի առջև, հրապարակապէս հանդէս դուրս կը գայ, բացարձակ կերպով իր այդ վարմունքի պատճառը յայտնելով։

***

Ախալքալաքից գրում են մեզ սեպտեմբերի 24-ից։ Սեպտեմբերի 14-ին և 15-ին Ախալքալաքում եկաւ երկու վերջօկից աւելի բարձրութեամբ ձիւն։ Դաշտերը բոլորովին ծածկվեցան ստիտակ քողով, իսկ Դուխաբօրների կողմը մօտ կէս արշինի բարձրութեամբ ձիւն կայ։ Բայց այժմ այստեղ էլի հալվեց ձիւնը։

***

Ախալքալաքից գրում են մեզ որ այս տարի տեղիս հայոց հոգևոր ուսումնարանի մէջ այնքան շատ աշակերտ մտնելու ցանկացողներ են թափել, որ ուսումնարանիս հոգաբարձութիւնը տարակուսած մնացել է, չը գիտենալով ինչ անէ։ Կամենում են փող հաւաքել քաղաքի մէջ մի նոր դասատուն դպրոցի մէջ բանալու համար, որտեղում են ուսուցիչ, բայց ուսուցիչ չէ գտնվում։

***

„Тифл. Вѣстн.“ լրագիրը իր համակրութիւնը յայտնելով մեր դիտաւորութեանը մի հրապարակական դատախազութիւն կարդալ հայերէն լեզուով, Թիֆլիսի հայ հասարակութեանը միօրական ժողովրդագրութեան միջը բացատրելու նպատակով, աւելացնում է որ ցանկալի կը լիներ որ մեր օրինակը հետևող ունենար և քաղաքիս մահմետական աղգաբնակութեան շրջանում, որտեղ ժողովրդագրութիւնը, առանց նորա էութեան ուսումնական բացատրութեան, կարող է ծնել անճոռնի հասկացողութիւններ։

***

Մենք լսում ենք հաստատ աղբիւրից, որ Թիֆլիսի Կօլոնիայի ջրանցքը, որը անց է կենում Մուշտաիդի այգիի միջով, մտադիր են շուտ ժամանակումը բարձրացնել այդ այգիից վերև իր այժմեան տեղից դէպի արևելը, որ այնտեղից հեշտութենով կարելի լինի ջրել նորանից ցածը եղած հողերը։ Այս ձեռնարկութիւնը շատ կը բարձրացնի հողերի գինը, որովհետև մինչև այժմ ջուր չունենալու պատճառով այդ հողերը կարող էին գործ ածվել միայն չինութիւնների համար, իսկ հեռու լինելով աւելի յարմար չէին այդ նպատակին, բայց ջուր անցկացնելուց յետոյ բացի դրանից կարելի է տալ դրանց զանազան չինատնտեսական գործածութիւններ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎԸ ՓՈՔՐ-ԱՍԻԱՅՈՒՄ

(„La famine en Asie—Mineure d'après les donnèes du „Levant Herald“ avec une prèface de l'éditeur. Constantinople 1875.)

Նորերումս ձեռքս ընկաւ մի ֆրանսիերէն գրքոյկ վերոյիշեալ վերնագրով։ Նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հաւաքածու ֆրանսիերէն թարգմանութեամբ այն բոլոր յօդուածների և թղթակցութիւնների, որոնք տպուել են Կ. Պօլսում հրատարակուող անգլեական „Levant Herald“ լրագրի մէջ Փոքր-Ասիայի սովի առիթով, հանդերձ մի յառաջաբանով թարգմանչի կողմից։ Համոզուած լինելով, որ այդ գրքոյկը հետաքրքիր կը լիներ մեր՝ ռուսիաբնակ հայերիս համար, որովհետև Փոքր-Ասիայի բնակիչների նշանաւոր մասը կազմում են մեր ազգակիցները, ես ցանկանում եմ համառօտ կերպով հաղորդել նորա բովանդակութիւնը ընթերցող հայ-հասարակութեանը։

Սովը սկսում է 1873 թ-ի վերջերում Փոքր-Ասիայի հիւսիսային կողմերումը, զլխաւորապէս Անգորա և Կաստամունի նահանգներում։ Սկզբում նա լենում է աննկատելի։ Դեռ աշնանը անձրևները և ձիւնը անհետացնում են եղած շաւիղները, այնպէս որ հաղորդակցութիւնը առանձին գիւղերի մէջ կորվում է. այդ տևում է ամբողջ ձմեռը, որ այն տարին սովորականից աւելի խիստ է լինում։ Իւրաքանչիւր գիւղը բոլորովին բաժանուած լինելով միւս գիւղից և դրսից չը ստանալով ոչինչ պաշար, սպառում է իւր մօտ եղած ուտելիքը, մինչև անգամ սերմացու ցորենը, յուսալով, որ ձիւնները հալուելուն պէս մերձակայ գիւղից կը լրացնէ իւր կարիքը։ Բայց ձմեռը սովորականից աւելի երկար է տևում և մինչև վերջանալը սովը բռնում է 40,000 անգլ. մղոնի չափ տարածութիւն. (կամ մօտ 91,500 ք. վերստ)։ Այդ տարածութեան բնակիչները վայրի խոտերն անգամ ստառելուց յետոյ, սկսում են կերակրուել բամբակի սերմերով (de la graine de coton)

Առաջին յօդուածը, որ տպուած է այդ առիթով „Levant Herald“ լրագրում (1874 թ-ի ապրիլի 23-ին) սկսում է այսպէս։

„Դժուութիւնը պէտք է օգնութիւն հասնի Փոքր-Ասիայի սովալլուկ ժողովրդին. հարկաւոր է շտապել.... Կաստամունի և Անգորա նահանգներում ժողովուրդը մեռնում է սովից։ Դարին ծախվում է 110 պիաստր քիլէն (մօտ 4½ ռ. չէտվերտիկը) իսկ սիմինտրը 6 պիաստր հոխան (10 կոպ. աւելի գրուանքէն)։ Ուրիշ տեղերում ցորենը, մինչև անգամ ամենացածր տեսակը արժէ գրուանքէն չորս պէնսից (10 կոպէկից) աւելի, և աւելի ձիշդ ասելով, դարին արժէ 7—10 լիվր (45—65 ռուբլի) քըվարտէրը 1) իսկ սիմինտրը 8 լիվր (մօտ 50 ռ.).... Մեր թղթակիցներից մինը մեզ պատմում է մի թշուառ ընտանիքի մասին, որ ուրիշ ոչինչ չը գտնելով ստիպուած է լինում տալ երախանցը սիմինտրի կոթի մեղուկը ծեծած ու խմորի պէս շաղախած։ Երեխայքը ուտում են և մեռնում են չարաչար հիւանդութիւնից յետոյ....

Տկարները, ծերերը, մանուկները մեռնում են հարիւրներով, իսկ ով ոյժ ունի ոտներում, շտապում է հասնել Կ. Պոլիս, կամ մի ուրիշ մեծ քաղաք և այնտեղ բանել մի կտոր հացի համար, կամ թէ չէ՝ չէում է դէպի ցորենով առատ դաշտերը գետնին թափուած հասկեր որոնելու։ Ամբողջ գիւղեր ու քաղաքներ բոլորովին ամայանում են և աւերակ դառնում, որովհետև այդ գաղթականները հայրենիքից դուրս գալուց առաջ իրանք իրանց ձեռքով քանդում են իրանց տները և հանում են կաւէ պատերի մէջ եղած մի փոքր փայտը իրրև վառելիք գործ ածելու կամ մի կտոր հացով ծախելու։ Իսկ եթէ իրանք այդ չանէին, հարևանները էին յանձն առնում այդ նեղութիւնը։

Ընդհանուր թշուառութիւնը մեռցրել էր ամէն մարդկային զգացմունք. հայրը ծախում էր որդուն երկու շիլլինգով. սովամահ եղածների դիակները մնում էին մի քանի օրով փողոցում ընկած, շները կրծում էին նրանց ոսկորները, իսկ նոցա ապականուած օդը այժ էր տալիս ժանտախտին և այլ տարափոխիկ ցաւերին, որոնք ամբողջ սովի ժամանակ ներգործում էին կատաղութեամբ։ Անգթութիւնը մինչև այն տեղն էր հասել, որ բնակիչներից շատերը աւազակային խմբեր էին կազմել մեծ ճանապարհների վերայ, որպէս զի յափշտակեն այն ուտելեղէնի պաշարը, որ մարդկային զթութիւնը հեռաւոր երկիրներից ուղարկել էր նոցա սովատանջ երկրակիցների համար։

Մի քանի տեղերի մասին ականատեսները պատմում են այնպիսի անլսելի իրողութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ այդ տեղերում սովը Պարսկաստանի սովից պակաս չէ եղել։ Ահա ինչ է գրում „Levant Herald“-ի թղթակիցներից մինը՝ պ. Ֆրանսվօրթը, որ ուղարկուած էր յատկապէս սովատանջ երկրների դրութեան մասին տեղեկութիւններ հաւաքելու։

„.... Եթէ ժողովրդի դրութիւնը սրատամլիկ էր Իւզգատում, հապա նա աւելի վատ էր Սունդուրլուում։ Այս քաղաքը, որ կայմականի բնակութեան տեղն է, պարունակում է մօտ 1000 տուն.... Գաւառապետը ինձ հաւատացնում էր, որ միայն այդ քաղաքի սովամահ եղածների թիւը հասնում է 8,000-ի, իսկ եթէ այս թուի հետ խառնենք և ուրիշ քաղաքներից (Սալմանից, Կէսկէնից) եկածների մահը, այն ժամանակ հարկաւոր է կրկնապակել այդ թիւը... Սունդուրլուից յետոյ մենք գնացինք տեսնելու Կայա-Դիրին, որ գտնվում է Սալմանի գաւառում Սունդուրլուից 20 մղոն դէպի հարաւ։ Այստեղ ես ճաշեցի միւդիրի և գաւառի դատաւորի հետ, որոնցից լսեցի մի քանի ամենազարհուրելի և անհաւատալի լուրեր։ Այս գիւղում, որ բաղկացած է 50—60 տնից, հարիւրից աւելի անձինք մեռել են ուժաթափութիւնից։ Մի մարդ, որի հետ ես խօսակցում էի, ինձ հաւատացնում էր, թէ նորա հինգ երեխից չորսը մեռել էին, իսկ հինգերորդը անյուսալի դրութեան մէջ էր։ Դատաւորը և միւդիրը հաստատում էին հետևեալ իրողութիւնները. Կայա-Դիրի գիւղում մի ախոռի մէջ սատկել է մի ուղտ, որի դէշը մնացել է այնտեղ քառասուն օր, վերջապէս երբ վճռել են դուրս քերել դէշը ախոռից, ժողովուրդը վրայ է ընկել նորա կտորները պոկելու և ուտելու։ Միւդիրը հրամայել է թաղել մնացորդը, բայց ժողովուրդը հողի տակից հանել է նրան, այնպէս որ ստիպուած էին պահապան կարգել փոսի մօտ։ Ամէնքը, որոնք կերան այդ ուղտի մսից, մեռան։

„Շատ գիւղեր այս գաւառում բոլորովին ամայացած են։ Դատաւորն ինձ ասաց, որ Իսրակլա գիւղում, որ գտնվում է մօտ լինն մղոն դէպի արևմուտք Կայա-Դիրից 400 մարդուց միայն 22-ն է կենդանի մնացել, և թէ մի դիակ մնացել է փողոցում 10 օր։ Հարկաւոր է եղել ուրիշ գաւառներից գիւղացիք բերել նրան թաղելու։ Մի և նոյն դատաւորն ինձ ասաց, թէ Նեֆեսկիւի գիւղում, որ հինգ ժամի ճանապարհով հեռու է Իւզգատից, մի սենեակում նա գտել է երեք երեխայ, որոնցից ամենահասակաւորը կը լիներ 10 տարեկան։ Թարձի թոզի արած իւրանց թշուառ ծակատագրի ձեռքում, նոքա մեռել են մինը միւսի յետևից.... Մէջիդիէից Բաց-Թէպէ գնալով, 21 մղոն տարածութեան վերայ, մենք անցանք վեց գիւղ։ Հինգը ներսից անբնակ էին, իսկ վեցերորդում երեսուն ընտանիքից մնացել էր միայն երեքը.... Կիւրակի օրը ես անցկացրի Աղ-Սէրայում և այդ 24 ժամի ընթացքում գոնե չորս մարդ մեռաւ ուժաթափութիւնից....“

Աը պէտք է կարծել թէ այս և սոցա նման իրողութիւնների մէջ կայ չափազանցութիւն։ Ամենափոքր կասկածն անգամ այդ տեղեկութիւնների ճշդութեան մասին անտեղի է թըւում, եթէ աչքի առաջ ունենանք մի կողմից այն, որ, ինչպէս վկայում է թարգմանիչը իւր յառաջաբանի մէջ, նոքա հաւաքուած են փոքր առ փոքր, արժանահաւատ և երկրին մօտ ծանօթ անձանց ձեռքով, իսկ միւս կողմից այն հանգամանքը, որ Տաճկաց կառավարութիւնը ամենայն խստութեամբ վերաստուգում էր ամէն մի լուրը այդ անախորժ երևոյթի մասին, որ նսեմացնում էր Օսմանեան պետութեան փառքը և թուլացնում էր նորա կրեդիտը եւրոպական դրամատէրերի առաջը։

Այս բոլորի վերայ պէտք է աւելացնել և այն հիւանդութիւնները, որոնք տարածուած էին թէ մարդոց և թէ կենդանեաց մէջ։ Անգլեական լրագրի թղթակիցներից մինը հաղորդում է Իւզգատից, թէ այդ քաղաքի զօրատան մէջ, ուր կառավարութիւնը հաւաքել էր ամենաթշուառներին օրական հաց տալու նպատակով, 2,500 հոգուց օրէնը 25—30-ը մեռնում է հիւանդութիւնից։ Անգորան, որ հռչակուած էր իւր այծերով և ուրիշ գաւառներ, որոնց մէջ ծաղկած էր խաշնարածութիւնը, այնպէս են անապատացել, որ կենդանութեան նշոյլ անգամ չէ մնացել նոցա դաշտերում։ Գլքոյկի վերջում կայ մի ցուցակ, վերին աստիճանի հետաքրքիր թուանշաններով, որոնցից երևում է, թէ Կէսկէնի պատկանող 42 գիւղում 1873 թ-ին եղել է 16,900 հոգի, իսկ 1875 թ-ին—9,261, մնացած ժողովրդից 4,997-ը մեռել է, իսկ 2,642-ը ցրուել. 2,206 զոյգ եղներից մնացել է միայն 427 զոյգ, 81,240 ոչխարից մնացել է 3,312։ Կէսկէնից կախուած բոլոր 160—170 գիւղերում 52,000 բնակիչներից մեռել է մօտաւորապէս 20,000 և ցրուել է 7,000 այնպէս որ մնացել է 1875 թ-ին միայն 25,000.

Ահա այս է վիճակուած եղել այն մարդոցը, որոնք իրանց ուսերի վերայ կրում են Օսմանեան պետութեան ծախքերի համարեա բոլոր ծանրութիւնը, որոնք ստիպուած են իրանց քրտինքով լցնել Ռ. Դրան անյագաստակ գանձարանը և բաւականութիւն տալ շռայլ պաշտօնակալների նրբացած ճաշակին։

Միւս համարում ես կը խօսեմ այն յօդուածների և թղթակցութիւնների մասին, որոնք բացատրում են սովի իսկական պատճառները և ցոյց են տալիս այն հնարները, որոնք գործ են դրուել և պիտի գործ դրուէին նորա առաջը առնելու համար։

Ս. Պետերբուրգ. Սեպտ. 24.

Ն. Լ.

ԹԻՒՐՔԻԱ

Վերջին հեռագիրները հաղորդում են որ Հերցեգովինայի և Բոսնիայի մէջ թիւրքաց զօրքերը յաղթութիւններն են անում։ Սէրվէր-փաշա հեռագրել է մեծ վիզիրին որ 1 (13) հոկտեմբերին Շէֆիկէտ-փաշան ջարդել է 2000 ապստամբներից բաղկացած զօրքը Գրօպի մօտ և որ ապստամբները փախան Ձերնոգօրիա, թողնելով 160 սպանվածներ։—Թիւրքաց տէրութիւնը պաշտօնապէս հիրքել է եւրոպական լրագիրներում Թիֆլիսի վրաց „Դրօէբա“ և ռուս „Тифл. Вѣстн.“ լրագիրներից հաղորդաց հեռագիրը Լազիստանի (Թիւրքաց Վրաստանի) մէջ յայտնված ապստամբութեան մասին։ Վրաց լրագիրը այնուամենայնիւ հաստատում է որ ապստամբութիւն կայ և ապացոյց է բերում որ այս օրերս բոլոր նշանաւոր պաշտօնեաները Լազիստանի մէջ հրաժարեցրած են Թիւրքաց տէրութեան հրամանով։—Լրագիրները հաղորդում են որ Թիւրքաց տէրութիւնը յայտնելով զանազան արտօնութիւններ, թէ անտեսական, թէ իրաւաբանական բնաւորութեան հպատակ բրայաներին, յայտնել է մի և նոյն ժամանակ որ սլավօնական լեզուն հպատակ սլավօնական գաւառներում պիտի այսուհետև համարվի նոյնպէս պաշտօնական, ինչպէս և թիւրքաց լեզուն։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական մինիստր—նախագահ հրատարակեց մի շրջաբերական հասարակական ընթերցարաններ մասին, որ զարմացրեց ամենքին։ Հրամայած է հասարակական ընթերցարաններից հանել Լակօմբի «Ֆրանսիայի պատմութիւն» գիրքը և նոյնպէս Էրկման-Շատրիանի բոմանները։ Երևում է որ պ. մինիստր Բրիֆֆէ թոյլ կը տայ հասարակական ընթերցարաններում միայն այնպիսի գրքեր, որք թոյլատրած են կաթոլիկ հոգևորականութենից։

—Լրագիրները հաղորդում են որ ֆրանսիական կառավարութիւնը նշանակել է մի քննողական մասնաժողով, բօնապարտեան կուսակցութեան քաղաքական ինտրիգները քննելու համար։ Այդ քննողական մասնաժողովի նախագահը նշանակված է Փարիզի ոստիկանութեան պրեֆէկտ պ. Լէօն Բէնօ։

—Հեռագիրը հաղորդում է որ հեղեղները Անգլիայի Լէյստէր և Վարվիկ կոմսութիւններում մեծ վնասներ են պատճառել։

—„Pol. Corresp.“ լրագիրը հաղորդում է Հերցեգովինայի ապստամբութեան մասին հետևեալ լուրերը։ Ապստամբները յաղթվեցան Թիւրքաց զօրքերից Սաօցայի մօտ։ Երևում է որ այն ժամանակից, երբ Թիւրքաց տէրութիւնը բազմաթիւ զօրքեր ուղարկեց Հերցեգովինա և Բոսնիա, ապստամբները կորցրել են իրանց մէջ կապերը և այժմ փոխանակ կազմակերպված ապստամբական զօրքերի, երևում են միայն խմբեր։ Բոսնիայի մէջ, յիշեալ լրագրի խօսքերին նայելով, ապստամբութիւնը կարելի է ճնշված համարել։

—Նորերումս Պարսկաստանի դեսպան Աղարփաշան ներկայացաւ Հռոմի պապին, հաստատելով նրան պարսից Շահի ինքնագիր նամակը, աւելացնելով որ Շահը ուրախութեամբ ընդունեց պապի ընծաները և յայտնեց թէ Պարսկաստանում հրաման է հրատարակվել, որ թոյլ է տալիս կաթոլիկներին ամբողջ երկրում ազատ դաւանել իրանց կրօնքը։

—Սերբիայից հաղորդում է սերբական „Народные Листы“ լրագիրը որ սեպտեմբերի 22-ին (հոկտեմբերի 4-ին), Սերբիայի իշխանը, մտնելով Սերբիայի ազգային ժողովը (սպուկչինա), յայտնեց նիստը գաղտնի։ Մինիստրները բողոքեցին իշխանի վարմունքի դէմ և կամենում են հրաժարական տալ։ Իշխանը դիմելով ժողովին, հարցրեց՝ «ուզենք դուք արդեօք հաւատարմութիւն դէպի իմ անձը»—այո, պատասխանեց ժողովը։ «Դուք կամենում էք պատերազմ, շարունակեց իշխանը և սկսեց յայտնել պատճառներ, ինչի կարելի չէ պատերազմը սկսել Թիւրքիայի հետ։—„Մենք գիտենք այդ պատճառները, աղաղակեց ժողովը, բայց դարձեալ կամենում ենք պատերազմ։“—Նիստը շատ աղմկալի էր և միւս օրը ներկայացաւ իշխանին սկուպչինայի կողմից պատգամաւորութիւն։ Լրագիրը նախագուշակում է յեղափոխութիւն Սերբիայի մէջ։

—Ավստրիական Զերնօվից քաղաքում բացվեցաւ նորերումս մի համալսարան, որտեղ դասերը կաւանդվին գերմաներէն լեզուով։ Զանազան համալսարաններից և նոյնպէս ռուսաց Դորպատի համալսարանից ստացվեցան շնորհաւորութիւններ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ավստրիական պետական կանցլեր Մետտերնիխ շատ ինքնուրոյն կերպով յայտնում էր իր կարծիքը անգլիացիների մասին։ «Իւրաքանչիւր անգլիացին, առանձին վեր առած, խելագարված է, ասում էր նա,—իսկ բոլոր անգլիացիք միասին վերցրած, կազմում են ամենախելացի ազգութիւն աշխարհիս երեսին»։

***

Ֆրանսիական „Figaro“ լրագրում տպված է հետևեալ անեկդոտը։ Երկու մարդ խօսում են Փարիզի բուլվարի վրա՝ «ինձ ասել են որ դուք կամենում էք մի առևտրական ընկերութիւն կազմել պ. Բ-ի հետ,»—Այո։—«Ինչով էք մասնակցում ձեռնարկութեան մէջ.»—Ոչինչով, ես իմ փորձն եմ տալիս, իսկ Բ. տալիս է իր դրամագլուխը։ Մեր ընկերութիւնը հինգ տարի կը տևի. յոյս ունեմ որ հինգ տարից յետոյ Բ. կունենայ իմ փորձը, իսկ ես ձեռքս կը դնեմ նրա դրամագլուխը...

***

1) Անգլիական քվարտէրը հաւասար է մօտ 11 չետվերիկի։

Լսում ենք որ հոկտեմբերի 30-ին Թիֆլիսի երկրորդ բաժանման հաշտարար դատաւորի մօտ պիտի քննվի Սարգիս Նազարբեկովի և Արտեմ Իզմերովի գործը։

***

Թիֆլիսի իտալական օպերայի վարչութիւնը վերջապէս սկսել է տալ և ուրիշ հեղինակների օպերաները, բացի Վերդիի օպերաներից։ Նորերումս տուեցին Մայերբերի «Հուգենոտներ» մի քանի անգամ, իսկ երեկ, հոկտեմբերի 8-ին տուեցին առաջին անգամ «Լուչրեցիա Բորջիա» Դոնիցետիի երաժշտութիւնը։

***

Թիֆլիսի Ներսէսեան ազգային հոգևոր դպրոցի հոգաբարձական սովորական նստերը որք լինում էին հինգշաբթի երեկոներին, այժմ կը լինեն ուրբաթ օրերին, նոյնպէս երեկոյեան։

***

Զմիւռնայի «Արշալոյս Արարատեան» լրագրի մէջ կարդում ենք հետևեալը՝ «Հասարակօրէն կը կարծվի թէ որ ազգի մէջ որ շատ լրագիրներ կը հրատարակվին, նոյն ազգը յառաջադիմութեան շաւղին մէջ կը գտնվի։ Այս կարծիքով կուրախանամք, լսելով թէ ի մօտ աւուրս երկու հայերէն նոր օրագիրներ հրատարակել սկսեր են ի Կ. Պոլիս, յորոցմէն «Միմոս» անուն զաւեշտական թերթ մի է և միւսն «Լրագիր» անուն քաղաքական օրաթերթ մի։»

***

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գնացած լինելով արտասահման, ես Թիֆլիսի հասարակութեան ճաշակին յարմար պատուէրներ և ընտրութիւն արի, արտասահմանի գործարաններում, մեծ քանակութեամբ զանազան տեսակի ապրանքների, ինչպէս օրինակ՝ մահուդ, դրապ, արիկո, պատրաստ շորերը զանազան հասակի անձների համար։ Կը ծախվին ինձ մօտ նաև գդակներ, չապիկներ, փողապատներ, օձիկներ, կոճակներ և այլն։ Ցոյս ունեմ որ հասարակութիւնը իմ խանութից առած ապրանքներով բոլորվին գոհ կը մնայ։—Խանութս գտնվում է Թիֆլիսում ԵՐԵՒԱՆՆԱՆ հրապարակի վրա, Էրվիէի (Բէօմի) խանութի մօտ։

Այդ բոլոր ապրանքները ԱՇՆԱՆ համար այս օրերս կը ստացվին։

ԳՐ. ՆԱՍԻԲՕՎ.

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԱԿՑԻԶԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻԱՆ կողմից յայտնվում է՝

1) Յունվարի 15-ին, 1874 թ. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված Պետական Խորհրդի կարծիքի հիման վրա, վերցնվում է Անդրկովկասում կապալատուութեան սիստեմը աղի վրա եկամուտի և մտցնվում է նրա փոխանակ յունվարի 1-ից, 1876 թ. ակցիզական սիստեմը, և այսուհետև աղը պիտի ծախվի Կուլպի և Նախիջևանի աղահանքերում ոչ աւելի թանգ քան 15 կոպէկ պուդը խոշոր աղը, իսկ 8 կոպէկ մանրը, որ գնի մէջ պարունակվում է ակցիզը (10 կամ 5 կոպ. պուդից) և պուդի գինը, որ կորոշվի աճրդախօսութեան (տօրգի) ժամանակ իւրաքանչիւր վիճակում։ 2) Այդ Կուլպի և Նախիջևանի աղահանքերը որք բաժանված են վիճակների (կամ շրջանների վրա, (որոնցից երեք Կուլպի և մինը Նախիջևանի մէջ), կը տրվին առանձին շրջաններով, ՄԵԾ ԻՇԽԱՆ ՓՈԽԱՐԲԱՑԻՑ դեկտեմբերի 31-ին, 1874 թ. հաստատված կանոնների հիման վրա, այն պայմանով, որ աղահանքերի ճշգութեամբ պահելը ապահոված լինի իսկոյն կրկնաճրդախօսութեան վերջանալուց յետոյ սահմանված գրաւականով։ 3) Աճրդախօսութիւնը յիշեալ աղահանքերի վրա կը կատարվի ԹԻՖԼԻՍՈՒՄ, Անդրկովկասեան ակցիզական վարչութեան մէջ, ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ին բանաւոր և մէրած յայտարարութիւնների թոյլատուութեամբ, իսկ երեք օրից յետոյ կրկնաճրդախօսութիւն։ 4) մանրամասն պայմանների վրա արենդայի մասին աղի վիճակների վրա կարելի է տեղեկանալ նոյն ակցիզական վարչութեան մէջ ամեն օր, 9 ժամից առաւօտեան մինչև 12 կէսօրի, բացի կիրակի և տօն օրերից։ 5) Բանաւոր մրցում մտնելու ցանկացող անձինք պարտաւոր են աճրդախօսութեան օրը, մինչև 12 ժամ կէսօրի, տալ խնդիրը դրա մասին Անդրկովկասեան ակցիզական վարչութիւնը, հանդերձ վկայագրի առևտրական իրաւունքի մասին և գրաւականների։ Մերձրած յայտարարութիւնները պէտք է գրած լինեն ընդունված ձևով (Ст. 1909 ч. 1. т. X. Св. гражд. зак. изд. 1857 г.), հանդերձ նոյնպիսի վկայագրի առևտրական իրաւունքի մասին և գարկացս գրաւականների $^1/_3$ դումարի իւրաքանչիւր պուդի գնից և նոյն չափով յանձն առնվող աղի վիճակի հետ միասին արքունի շինութիւնների արժողութեան։ Այդ յայտարարութիւնները պիտի ներկայացվեն, կամ ուղարկվեն ոչ ուշ քան 12 ժամ կէսօրի, աճրդախօսութեանը նշանակված օրը։

1 (1)



ДЕПО ЛАМПЪ

Ефрема Цатурова

ТИФЛИСЪ, противъ Музеума въ домѣ Шабурова.

Ե. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ Լամպանների խանութում ստացվեցան այս օրերս մեծ քանակութեամբ ամենակատարելագործված զանազան տեսակի ԼԱՄՊԱՆԵՐ, Փարիզի, Բերլինի և Վիէննայի ամենանշանաւոր գործարաններից։

3 (6)

Г-жа Псорръ имѣетъ честь объявить, почтеннѣйшей публикѣ, что она послѣ смерти мужа своего продолжаетъ въ своемъ заведеніи также хорошо мыть ЛАЙКОВЫЯ И ЗАМШЕВЫЯ ПЕРЧАТКИ, а также КОРСЕТЫ, по весьма умѣреннымъ цѣнамъ, она надѣется, что публика останется довольною. Заведеніе помѣщается въ домѣ Манташева, на Гановской улицѣ, рядомъ съ Коммерческимъ Банкомъ.

Марія Псорръ.

Մօտ ժամանակներս Մոսկվայում հրատարակվեցաւ Ա. Գրիգորեանցի «ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ» տետրակները ծխական ուսումնարանների համար և վաճառվում է Թաղումի աշխատասիրողի մօտ իւրաքանչիւր օրինակը 20 կոպ.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել՝ ի Բաքու այս հասցէով. Въ Баку Аваку Лазаревичу Григорьеву, въ Армянскомъ Училищѣ.

2 (2)

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անդրկովկասեան ԱԿՑԻԶԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, ունենալով տեղեկութիւն որ Երևանեան նահանգում լուր տարածվեցաւ իբր թէ աղի վրա յունվարի 1-ից 1876 թ. ակցիզ մտցնվելու պատճառով, կը բարձրանայ աղի վրա գինը և որ յիշեալ լուրը շատերին կը սարսափ աղի պաշար անել ապագայ գործածութեան համար, գնելով այդ աղը այժմեան կապալառուներից, իր պարտաւորութիւն է համարում հաղորդել աղ գործածողներին, որ յունվարի 15-ին 1874 թ. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված Պետական Խորհրդի կարծիքի և 1876 թվին կապալով տալու Անդրկովկասեան աղահանքերի կանոնների հիման վրա, աղի վրա ակցիզը սահմանված է հետևեալ չափով՝ խոշոր քարի աղի վրա 10 կոպէկ պուդից, իսկ մանր աղի վրա 5 կոպէկ պուդից և Կուլպի ու Նախիջևանի աղահանքերից դուրս չը պէտք է անցնէ հետևեալ գնից՝ խոշորը 15 կոպէկ պուդը և մանրը, որ մընում է քարի աղի կոտրելուց 8 կոպէկ պուդը։ Այդ գնի մէջ (15 և 8 կոպէկ պուդի համար) որ պարտաւորիչ է աղահանքերի դալու կապալառուների համար աղը արդիւնաբերութեան տեղի վրա ծախելու ժամանակ, պարունակվում է ինչպէս ակցիզ (10 կամ 5 կոպէկ պուդից), նոյնպէս և իւրաքանչիւր պուդի համար վճարը։

3 (3)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ զիմնազիստ ցանկանում է ԴԱՍԵՐ տալ զիմնազիական բոլոր առարկաներից մինչև 6-երդ դասատունը։ Հարցնել „Մշակի» խմբագրութեան մէջ։

10 (10)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, Կլասիկական զիմնազիօնի, դիպլոմ ունեցող, կամենում է պարապել դասատուութեամբ կլասիկական պրոգիմնազիական առարկաներից։ Կամեցողը կարող են դիմել՝ ի Բաքու այս հասցէով։ ԿՈՒԿԻՍ, Հաւաշլեան փողոցի վերայ, սուդի դէմուդէմ, տուն Մուրադեանի։

3 (3)

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9. ՏԵՂԵԿԱՑՈՅՑ ԹԻՖԼԻՍ. 1875.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Հոկտեմբերի 8-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլուսիմպերիալ). .	5	90
Բամբակ Երևանս. . .	—	—
„ Ամերիկայի սերմից	—	—
Բուրդը թուչի . . .	7	80
Թարաքամի . .	4	50
Շաքարը ռոսի (բրօցկու)	7	90
„ միւս տեսակը .	7	50
„ զագրան, տրանզիտ. . . .	4	50
„ մաքսը վճարած	7	50
Շաքարաւազը Ռոսի . .	6	40
Ղահվա Լիմանի լաւը. .	17	17
„ Մոկո չատ լաւը	18	50
„ Մարտինկոի ցածր	13	—
Աւիւրը Երևանի . . .	1	—
Աւիւրը Գեանջու հասարակ. . . .	1	—
„ Շորագեալու. .	1	5
Գարին	—	55
Մոմ.	10	40
Խոխանակագիր Պոլսի	6	60
„ Դավրէժի	4	38
Լօնդոնի կուրսը (Օդեսայի վերայ) 1 լիրան արժէ. .	7	26
Մարսէլ և Փարիզ 344 ֆր. արժէ	100	

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի զբաղաւոր քաղաքները.	1	
Նոր-Նախիջևան.	1	
Մոսկվայ, Ս. Պետերբուրգ. Նիժնի-Նովգորոդ .	2	
Աւստրիա . . .	2	75
Անգլիա. . . .	3	75
Գերմանիա. . .	2	63
Թուրքիա . . .	3	
Ֆրանսիա . . .	3	50

ՆԱՒԵՐ (Շրջական գիծ)

Օդեսայից Փոթի (ամառը) հինգշաբթի ժամը 2-ին կէս օրից յետոյ։

Փոթից Օդեսա կիրակի 6 ժամին կէս օրից յետոյ։

Օդեսայից Փոթի (ձմեռը) հինգշաբթի 3 ժամին։

Փոթից Օդեսա հինգշաբթի առաւօտեան։

Փոթից Կ. Պոլիս երկուշաբթի առաւօտները։

Կ. Պոլսից Փոթի կիրակի առաւօտները։

(Ուղղակի գիծ)

Օդեսայից Փոթի երկուշաբթի 3 ժամ. կէսօրի։

Փոթից Օդեսա Շաբաթ 8 ժամ. առաւօտ։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 36 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվո (խառն գնացքը) երեկոյեան 4 ժամ. 54 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 36	4. 54
Գորի. . . .	12. 32	9. 11
Միխայլօվո .	2. 15	11. 25
Բուրթայխ . .	8. 33	
Փոթի. . . .	11. 44	

	առաւօտ.
Փոթիից . .	8. 40
Բուրթայխ . .	11. 59
Միխայլօվո. .	5. 56
Գորի. . .	7. 33
Թիֆլիս. .	10. 16

	1. 06	
	3. 36	
	7. 24	

Թիֆլիս գալիս է ճանապարհորդների գնացքը երեկոյեան 10 ժամին 49 րոպէ։

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գորի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Բուրթայխ	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ընդունում է

Ռուսաստան և Եւրոպա ամեն օր, բացի կիրակի։

Երկուշաբթի

Երևան (Զուլֆ, Պարսկաստան) Օղուրգէթ, Ախալցխայ, Բէյլի Կլիուչ, Բագուի և Գանձակի նահանգ (ծանր փոստ)։

Երեքշաբթի

Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ (ձմեռը) Բագուի և Գանձակի նահանգներ (թեթև փոստ)։ Նուխի (Ցարսկի Կոլօդցի, Զաքաթալ, Սղնախ, Թելաւ, Լագօդէխ) թեթև փոստ։

Չորեքշաբթի

Երևան, (Զուլֆ, Ալէքսանդրապոլ, Նոր-Բայազէդ) Զուզդիդ։

Հինգշաբթի

Սև և Միջերկրական ծովի տաճկաց նաւահանգիստներ։

Ուրբաթ

Երևան (Զուլֆ, Պարսկաստան, Ալէքսանդրապոլ) Օղուրգէթ, Ախալցխա, Բէյլի Կլիուչ, Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ, (ամառը), Բագուի և Գանձակի նահանգները (թեթև փոստ)։

Շաբաթ

Նուխի, (Ցարսկ. Կոլօդ. Զաքաթ. Սղն., Թէլաւ).

Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու կէսեր ամեն օր, բացի կիրակի։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակը ամէն. .	4
Ռուսաստան նամակը	8
Գերմանիա, Աւստրիա	8
Ֆրանսիա.	13
Անգլիա	8
Շվէյցարիա. . . .	8
Թուրքիա (Կ. Պոլիս .	20
Թիւրքիա (ցամաք) . .	20
Իտալիա	8
Ամէրիկա	28
Պարսկաստան . . .	10
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ՓՕՍՏԻ ԿԱՌՈՒՑՔ

Թիֆլիսից Վլադիկավկաս ամեն օր, երկու անգամ օրը։

Թիֆլիսից Պիատիգորսկ, և Ստավրապոլ հինգշաբթի և շաբաթ օրերը 6 ժամին առաւօտեան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

(Հոկտեմբերի 4-ին)

Լօնդոն մի բուրլ ամէ 32½ պէնս (փոխանակ 40 պէնս)։

Փարիզ մի բուրլ ամէ 341½ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

Առաջին 5% փոխառութեան տոմսակ	234
Երկրորդ	226
5% բանկի տոմս. 1 շրջանի	99½
„ „ „ 2 „	99½
„ „ „ 3 „	—
5% րէնտա	103
Ազով-Դոնի բանկի ակցիաներ.	190
Օդեսայի Առևտր. բանկի տոկցիաներ.	193
Ս. Պետերբուրգի քաղաքային կրեդիտի ընկերութ. օբլիգացիաներ	92¼

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Դերբէնդ. Ասպար։ Բրօշիւրը կուղարկենք, ուշացրինք, ներեցէք։ Բայց ձեր յօդվածները տպելու չենք։ Ինչ հետաքրքիր է, քաղուածք ենք անում։

—Ղուբայ. Խթան. Ձեր յօդվածը ստացանք։ Դեր չը գիտենք տպելու ենք թէ չէ։

—Գանձակ. Մեր ստորագրողներին։ Խնդրում ենք գոնէ այս տարվայ փողերը չուտով ուղարկեցէք։ Չենք կարող լրագիր հրատարակել առանց փողի։

Дозволено цензурою 8 Октября 1875 г. Тифлисъ Типографія Меликова

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ